

Մագիստրոսական կրթական ծրագրեր

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը օտարերկրյա ուսանողների համար առաջարկում է հետևյալ մագիստրատուրայի ծրագրերը.

Մագիստրոսական ծրագրեր	Տարեկան ուսման վարձ (ՀՀ դրամ)	
	Առկա ուսուցում	
1. Մոլեկուլային և բջջային կենսաբանություն	1,000,000 ՀՀ դրամ	
2. Նեյրոֆիզիոլոգիա և տոքսիոլոգիա	1,000,000 ՀՀ դրամ	
3. Երկրաբանություն	1,000,000 ՀՀ դրամ	
4. Տեղեկատվական համակարգերի մշակում *	1,000,000 ՀՀ դրամ	
5. Բնապահպանություն և բնօգտագործում	1,000,000 ՀՀ դրամ	
6. Շուկայագիտություն	1,000,000 ՀՀ դրամ	
7. Գործարար վարչարարություն *	1,000,000 ՀՀ դրամ	

Առկա ուսուցմամբ մագիստրոսական ծրագրերի տևողությունը 2 տարի է: Մագիստրոսական ծրագրերը, որոնք նշված են (*) տևում են 1,5 տարի:

Երկրաբանություն

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Երկրաբանություն» ամբիոնի մասնագիտական կրթական ծրագիրը նպատակ ունի ապահովել ժամանակակից հետազոտական թեմաներ Երկրի մասին գիտությունների ոլորտում: Ուսումնառության ընթացքում ուսանողները կստանան հիմնավոր գիտելիքներ երկրաբանական գիտության տարբեր ուղղությունների՝ ակտիվ տեկտոնիկայի, երկրաբանական վտանգների, սեյսմոլոգիայի, հրաբխագիտության, նստվածքագիտության, երկրաքիմիայի, երկրաֆիզիկայի, հիդրոերկրաքիմիայի, օգտակար հանածոների և դրանց որոնման մեթոդների, պետրոլոգիայի, աշխարհագրական տեղեկատվական մեթոդների, ինչպես նաև հարակից այլ ուղղությունների մասին: Ուսումնառության ընթացքում ուսանողները հնարավորություն ունեն մեկնաբանել տարբեր հետազոտական արդյունքները լաբորատորիաներում, օգտագործել

Ժամանակակից տեխնոլոգիաներ հետազոտության համար, ինչպես մասնակցելու ինստիտուտի ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի դաշտային և լաբորատոր աշխատանքներին:

Շուկայագիտություն

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

“Շուկայագիտություն” մասնագիտական կրթական ծրագրի նպատակն է ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումը, գիտամանակավարժական, ուսումնամեթոդական, գիտական, սոցիոհաղորդակցական, համագործակցային հմտությունների զարգացմանը նպաստող կազմակերպամեթոդական պայմանների ստեղծումը:

“Շուկայագիտություն” ՄԿԾ-ի խնդիրներն են՝

- ապահովել ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման պայմաններ, ապագա շուկայագետների մրցունակության իրատեսական երաշխիքներ,
- մշակել կադրերի պատրաստման ժամանակակից մեթոդներ,
- ստեղծել ուսանողակենտրոն ուսուցման համակարգի արդյունավետ գործառության համար համապատասխան պայմաններ,
- իրականացնել գիտամեթոդական և գիտահետազոտական գործունեություն՝ ամբիոնի գերակա ուղղություններով,
- ստեղծել կրթության ոռակի ապահովման պայմաններ,
- ընդլայնել միջազգային համագործակցության շրջանակները,
- նպաստել մասնագիտական ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցությանը,
- ուսումնական գործընթացի մասնակիցների համար ապահովել մասնագիտական տեղեկատվության աղբյուրներ,
- ապահովել կրթական, գիտահետազոտական և նորարարական գործընթացների միասնությունն ու անքակտելիությունը,
- կատարելագործել ուսումնական, մանկավարժական, գիտահետազոտական պրակտիկաների բովանդակային և կազմակերպական բաղադրիչները,
- իրականացնել կարիերայի կենտրոնների և գործատուների հետ համագործակցություն՝ շրջանավարտներին մասնագիտական աշխատանքով ապահովելու նպատակով:

Շրջանավարտի մասնագիտական զբաղվածության պրոֆիլի կառուցումը հիմնված է ուսումնական պլանում ներառված կիսամյակային դասընթացների տրամաբանական հերթակայության և բաշխվածության հաշվառման վրա: Մագիստրոսները կկարողանան աշխատել շուկայագետի որակավորում պահանջող տեղական և միջազգային կազմակերպություններում, ինչպես հետազոտական, այնպես էլ մասնագիտական տեխնիկական և կառավարչական հմտություններ պահանջող ստորաբաժանումներում:

Բնապահպանություն եվ բնօգտագործում

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Բնապահպանություն և բնօգտագործում» մագիստրոսական կրթական ծրագիրը տալիս է խորը, համապարփակ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ գիտահետազոտական աշխատանքների իրականացման, ստացված տեղեկատվության մշակման և մեկնաբանության ուղղությամբ՝ շրջակա միջավայրի, բնապահպանության և բնօգտագործման բնագավառներում:

Ծրագրի նպատակն է մրցունակ մասնագետների պատրաստումը՝ գիտակրթական, համագործակցային կոմպետենտությունների զարգացմանը նպաստող ուսումնական և կազմակերպամեթոդական արդյունավետ պայմանների ստեղծման միջոցով: Շրջակա միջավայրի վերաբերյալ համալիր և միջազգային մրցունակ գիտելիքների ձեռքբերման կարողությունների զարգացման համար առարկայական ծրագրի 80%-ը արդիականացվել է՝ մոտարկելով եվրոպական լավագույն փորձը: Ուսանողները ուսումնական պրոցեսում անցնում են շրջակա միջավայրի երկրաքիմիայից, ռադիոէկոլոգիայից, շրջակա միջավայրի մոնիթորինգից, ԱՏՀ և հեռազննման տեխնոլոգիաներից մինչև էկոտոքսիկոլոգիա և սննդի անվտանգություն: Արդեն մի քանի տարի ամբիոնիում ներդրված է հետազոտահեն և նախագծահեն կրթություն:

Տեղեկատվական համակարգերի մշակում

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում, «Ինստիգեյթ» ընկերության և «Գիտական հետազոտությունների զարգացման կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ, գործում է «Համակարգչագիտություն և ինքնավար

համակարգեր» ամբիոնը՝ «Տեղեկատվական համակարգերի մշակում» մագիստրոսական կրթական ծրագիրն իրականացնելու նպատակով:

«Տեղեկատվական համակարգերի մշակում» մագիստրոսական կրթական ծրագիրը նպատակ ունի իրականացնել նախագծահեն հետազոտություն պետությունից ու ընկերություններից ստացված և «Գիտական հետազոտությունների զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից հաստատված իրական նախագծերի շրջանակում:

Ուսուցումն իրականացվում է իրական նախագծերի միջոցով. տարբեր ուսումնական հաստատությունների ուսանողները սովորում են տեսությունը անհատական ձևաչափով՝ դասընթացը վարող դասախոսի հետ համագործակցությամբ՝ հարց ու պատասխանի ձևաչափով, առցանց նյութերից օգտվելով, իսկ գործնական աշխատանքը կատարում են միասին՝ ուղղաձիգ նախագծերի վրա հետազոտություններ կատարելով: Առաջնային տեղում է ուսանողի՝ հետազոտություններ կատարելու և որակյալ թեզեր գրելու կարողության զարգացումը:

Այս մոտեցումը վերջերս մեծ տարածում է ստացել աշխարհի տարբեր ծայրերում՝ նախագծային ուսուցում, միջառարկայական կապեր, միահավաք կրթակարգ և նման այլ եզրույթների անվանումներով: Սակայն մեր մոտեցումն առանձնանում է իրական ընկերությունների հետ կապով և իրական նախագծերով, այլ ոչ թե դասախոսի կողմից տրված ոչ կիրառելի հանձնարարություններով:

Արդյունքում մշակվում է միջհամալսարանական և միջմասնագիտական հեռավար համատեղ կրթական ձևաչափ՝ հիմնված սեփական տեղեկությունների կառավարման հարթակի վրա: Այն հնարավորություն է տալիս սուսանողներին, դասախոսներին և հետազոտողներին տվյալ հարթակում ունենալու և վարելու իրենց անձնական էջերը, կառավարելու նախագծերը, առցանց դասընթացները, տեսանյութերը և փաստաթղթերը:

Մոլեկուլային եվ բջջային կենսաբանության

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Մոլեկուլային և բջջային կենսաբանության» մասնագիտական կրթական ծրագրի նպատակն է գիտակրթական համակարգի համար պատրաստել արդի մոլեկուլային և բջջային կենսաբանության մեթոդներին տիրապետող բարձր որակավորում ունեցող մասնագետներ: Այն տրամադրում է հարթակ՝ կերտելու հիմնարար գիտելիքներ և ձեռք բերելու հմտություններ գիտության և տեխնոլոգիայի բնագավառում:

«Մոլեկուլային և բջջային կենսաբանության» մասնագիտության կրթական

ծրագիրը ներառում է ինչպես տեսական, այնպես էլ հետազոտական դասընթացներ: Բացի այդ, դասընթացների ընթացքում ուսանողները հնարավորություն կունենան մասնակցել տարբեր հետազոտական նախագծերին, որտեղ օգտագործվում են բազմազան կենսաբանական համակարգեր՝ կլինիկական նմուշներից մինչև կենդանական և համակարգչային մոդելներ, կիրառելով մոլեկուլային և բջջային կենսաբանության ժամանակակից մեթոդներ՝ ԴՆԹ կլոնավորում, ՊՇՌ, սեքվենավորում և այլն:

Մեր շրջանավարտները ստեղծագործ, անկախ և արդյունավետ հետազոտողներ են, որոնք կարող են աշխատել գիտակրթական, բժշկության, արդյունաբերության, բիզնեսի ոլորտներում կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններում:

Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները հնարավորություն ունեն աշխատելու որպես կրտսեր գիտաշխատողներ ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում, ինչպես նաև ուսումը շարունակելու ասպիրանտուրայում:

ՆԵՅՐՈՏԻԶՈԼՈԳԻԱ և ՏՈՔՄԻՆՈԼՈԳԻԱ

Մագիստրոսական այս ծրագիրը տրամադրում է հիմնարար գիտելիքներ՝ նեյրոֆիզիոլոգիայի, թունաբանության (տոքսիոլոգիայի), հոգեֆիզիոլոգիայի, կլինիկական կենսաքիմիայի, էլեկտրաֆիզիոլոգիայի, բուսական, կենդանական և մանրէաբանական տոքսինների կենսաքիմիայի, քիմիայի և ծագումնաբանության, նեյրոդեգեներատիվ պաթոլոգիաների, նյարդաներզատչական հարաբերությունների և հարակից բազմաթիվ այլ ոլորտների գիտական նորագույն ձեռքբերումներից:

Այս ծրագիրը ուսանողներին գիտության հանդեպ հետաքրքրություն առաջացնելու հարթակ է հանդիսանում և խթանում է նրանց երրորդ աստիճանի (ասպիրանտուրա) կրթություն ստանալուն:

Մագիստրատուրայի ուսումնական ծրագիրը ներառում է և հիմնարար բնույթի դասախոսություններ և հետազոտական աշխատանքներ լաբորատորիաներում, որոնք վարում են տվյալ ոլորտի բարձր որակավորում/վարկանիշ ունեցող գիտնականները: Ուսման ավարտին ուսանողները կստանան մագիստրոսի աստիճան «Նեյրոֆիզիոլոգիա

և տոքսինոլոգիա» մասնագիտությունից՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Գործարար վարչարարություն

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Գործարար վարչարարություն» մագիստրոսական դասընթացը նպատակ ունի պատրաստել «Գործարար վարչարարություն» (կառավարում) (MBA – Master of Business Administration) մասնագիտացմամբ որակյալ մասնագետներ՝ օժտված տնտեսության գործարար հատվածում տեղի ունեցող գործընթացների պահանջներին համահունչ հմտություններով և զինված կառավարման, տնտեսագիտական և ֆինանսական ոլորտների վերաբերյալ խոր գիտելիքներով: Ուսումնառության ընթացքում ուսանողները կստանան հիմնավոր գիտելիքներ տնտեսագիտության, կառավարման և ֆինանսների տարբեր ուղղությունների՝ այդ թվում, մարքեթինգի, բրենդինգի, միջազգային բիզնեսի կառավարման, գործարար ռիսկերի կառավարման, արժեթղթերի շուկայի, ինչպես նաև հարակից այլ ուղղությունների մասին: Ուսումնառության ընթացքում ուսանողները հնարավորություն ունեն ձեռք բերել պրակտիկ փորձառություն Հայաստանի առաջավոր ընկերություններում և այն կիրառել մագիստրոսական թեզերի հետազոտությունների շրջանակում: